

Զ Ե Կ Ո Յ Ց

Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՍՄԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՔՔ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Խոր դոճուակութեամբ կը ծանուցանենք թէ Հ. Բ. Ը. Միութեան կրթական կարեւոր մէկ ծրագիրը իրագործումի համարուն մէջ մտած է վերջերս:

Պէշտոյթի մէջ, 1964 - 65 զպրոցական տարեշրջանին պիտի բացուի Հայկական Ուսմանց Դասընթացք մը, նպատակ ունենալով մեր լեզուն, պատմութեան և մշակութային թանկագին ժառանգութեանց հանգամանօրէն լի կարելի խորութեամբ հմտացնել երկու սեռէ հայ ուսանողները: Կը յուսանք այս կերպով ազգային դատարարական զանազան հիւղերու համար պատրաստել ձեռնհաս, որակեալ դասախօսներ, որոնց պակասը օրըստօրէ աւելի զգալի կը դառնայ ու նաև օժտուած երիտասարդներէ գրչի մշակներ՝ մեր մտաւորական անդաստանին համար:

Այս կենսական ձեռնարկին վեհանձն մեկնեան է Հ. Բ. Ը. Միութեան Բարերար Անդամ Տիար Երուանդ Հիւսիսեան, որուն առատասիրտ նուիրատուութիւնները Բարեգործականի զպրոցաշինութեան արշաւին, անոր նպատունկալ վարժարաններուն, էջմիածնի շինարարական ծրագիրներուն և վերջին անգամ Երուսաղէմի Ս. Թարութեան Տաճարին նորոգութեան համար կատարուած հանգանակութեան, իրենց արժանի արձագանգը գտած են, անցեալին և ներկայիս, հայ մամուլին մէջ և լայնօրէն ծանօթ են մեր հասարակութեան:

Հայագիտական ուսմանց ծրագիրը ատենէ մը ի վեր մշակած էր Միութեան Լիբանանի Պատ. Երջանային Յանձնաժողովին կողմէն գործող կրթական Յանձնախումբը, Միութեան վարժարաններուն վերահսկողութեան իր աշխատանքներուն ընթացքին նման դասընթացքի մը անհրաժեշտութիւնը զգացած ըլլալով զօրեղացէս:

Անցեալ աշնան երբ Տիար Հիւսիսեան Մերձաւոր Արեւելք կը գտնուէր և անձամբ տեսնելով Միութեան կրթական ծաւալուն ու բազմաթիւն գործը՝ հրճուանքով և խանդավառութեամբ լեցուած էր, տեղեկացաւ այդ գործին նոր թափ մը տալու սահմանուած ծրագրին և ազնուօրէն յանձն առաւ անոր ծախքերը հոգալ:

Առաջագրուած դասընթացքը պիտի կոչուի Հ. Բ. Ը. Միութեան Երուանդ Հիւսիսեան Հիմնարկ Հայագիտական Ուսմանց:

Այս նպատակին համար յարկ մը պիտի կառուցուի Միութեան Յովակիմեան-Մանուկեան վարժարանին վրայ, որուն շինութեան, կահաւորման և այլ ծախքերուն համար Տիար Հիւսիսեան արդէն կեղծ վարչութեան փոխանցած է 12,000 տոլար:

Դասընթացքը առ այժմ պիտի ունենայ երեք տարուան շրջան մը, և Տիար Հիւսիսեան յանձն առած է վճարել այդ երեք տարիներու ծախքերը՝ 15,000 տոլար:

Դասերը տեղի պիտի ունենան երեկոները, ի դիւրութիւն ուսանողներու:

Ուսումնական ծրագրին մէջ նախատեսուած առարկաներն են. Գրաբար լեզու, Հայոց Հին և Նոր Գրականութեան Պատմութիւն, Հայ փողովուրդի Պատմութիւն, Աշխարհագրութիւն Պատմական և Արդի Հայաստանի, Հայաստանեայց Եկեղեցւոյ Պատմութիւն, Հայ Լեզուի Պատմութիւն, Հայ Արուեստներու Պատմութիւն, ևն., թուելու համար միայն գլխաւոր նիւթերը:

Երբ դասընթացքը բացուի, պիտի հաղորդենք նաև ուրիշ մանրամասնութիւններ:

Ներկայիս մեր հաճելի պարտականութիւնն է Հ. Բ. Ը. Միութեան սրտագին գնահատանքը և ջերմ երախտագիտութիւնը յայտնել Տիար Երուանդ Հիւսիսեանի, որուն կրթատէր ոգին այս գովելի ձեռնարկը իրականացուց, և որուն անունը միշտ յարգանքի և սիրոյ զգացումներով պիտի կրկնեն իր ապագայ սաները:

Նիւ Եօրք, 3 Փետրուար 1964

ԴԻԻԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐԶ. ԺՈՂՈՎԻ